

Լույս է տեսնում Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գիտական խորհրդի՝ 1997 թ. դեկտեմբերի 1-ի նիստի որոշմամբ:

Հ 246 Հայագիտական հանդես: Եր.: Հայինֆո, 1999:

Գլխավոր խմբագիր՝ Մ. Մ. Մահակյան

Խմբագրական խորհուրդ՝ Ս. Արզումանյան, Գ. Բաղդասարյան, Մ. Գիլավյան, Գ. Գրիգորյան (գլխավոր խմբագրի տեղակալ), Ա. Դոլուխանյան, Ա. Մարության, Ն. Սկրտչյան, Դ. Նազարյան, Հ. Հակոբյան, Ա. Շեկունց

Պատրաստման և տպագրության պատասխանատու՝ Ա. Ջահուկյան

Главный редактор С. М. Саакян

Редакционная коллегия С. Арзуманян, Г. Багдасарян, М. Гилавян, Г. Григорян (заместитель главного редактора), А. Долуханян, А. Марутян, Н. Мкртчян, Д. Назарян, Г. Акопян, А. Шекунц

Исполняющий обязанности ответственного секретаря А. Джаукян



© «Հայինֆո» գործակալության «Արտագերս» հրատարակչություն

«Հայաստան»

ԵՐԵՎԱՆ 1999

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

Ա. Ա. ՄԱՐՈՒԹՅԱՆ



Լրացավ ճանաչված լեզվաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ԱՇՈՏ ԱՐԲԱՀԱՄՅԱՆԻ ծննդյան 80 տարին:

Այս հոբելյանը, սակայն, մենք նշում ենք առանց հոբելյանի: Նա զինվորի նման ընկավ բաց ճակատամարտում: Այրիլյան այդ առավոտ սովորականի պես մտավ լսարան, պարապեց դասերը եւ շտապեց Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ՝ գիտական նստաշրջանում զեկուցում կարդալու: Ո՞վ կմտածեր, որ պիտի ավարտի իր զեկուցումը՝ հինգ րոպե լրացուցիչ ժամանակ խնդրելով, պատասխանի իրեն ուղղված հարցերին եւ հանկարծ կայծակնահար կաղնու նման ընկնի ամբիոնի մոտ՝ դահլիճում նստածների ապշահար աչքերի առաջ...

Դա 1985 թվականի տասնվեցին էր, իսկ այդ ժամանակ նա ընդամենը 67 տարեկան էր:

Հին իմաստությունն ասում է. «Բազումք են կոչեցեալ եւ սակաւք ընտրեալք»: Այդ սակավ էլ ընտրյալներն էլ միշտ անմար են պահել մեր ոսկեդենիկ լեզվի մշտավառ ջահը:

Իր բազմաբեղուն գործունեությունն ու իմաստալից կյանքը հայերենագիտությանը նվիրած այդ երախտավորներից է պրոֆ. Աշոտ Աբրահամյանը:

Ծնվել է 1918 թվականի սեպտեմբերի 17-ին, Սեւանի շրջանի Շահրիզ (այժմ՝ Գեղամավան) գյուղում, տոհմիկ հողագործի ընտանիքում:

Նախնական կրթությունն ստացել է Սեւանի յոթնամյա դպրոցում: 1932 թվականին ավարտելով յոթնամյակը՝ փոխադրվում է Երևան, ավարտել է միջնակարգ դպրոցը:

1937 թվականից ուսուցչական աշխատանք է կատարել Հրազդանի (Մխաթա) շրջանի դպրոցներում, վարել միջնակարգ դպրոցի ուսնավարի եւ դիրեկտորի պաշտոններ: Մակայն սովորելու տենչը միշտ ուղեկցել է ապագա գիտնականին: Նրան ձգում էին «երկարագիր գրքերի» աշխարհը, մագաղաբյա մատյանները:

Հայ գրականության եւ հայոց լեզվի նկատմամբ ունեցած սերն էլ ստիպում է նրան խորանալ սիրած մասնագիտության մեջ: Նա ընդունվում է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը: Ուսումնառության տարիներին անվանի հայագետ Արարատ Ղարիբյանը նկատում է Աշոտ Աբրահամյանի արտակարգ ընդունակությունները, եռանդն ու աշխատասիրությունը եւ հովանավորում է նրան: 1943 թվականին ավարտելով մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժինը՝ պետական քննական հանձնաժողովի հատուկ որոշմամբ ասպիրանտական ընդունելության քննություններ է հանձնում հայկական մանկավարժական ինստիտուտում եւ ընդունվում այդ ինստիտուտի ասպիրանտուրան՝ աշակերտելով անվանի հայագետներ Հր. Աճառյանին, Գ. Ղափանցյանին, Ար. Ղարիբյանին:

Իր ուսուցիչներից ստացած հարուստ գիտելիքներով էլ Ա. Աբրահամյանը մտնում է հայ լեզվաբանության աշխարհը՝ իր անունը մեկընդմիջտ կապելով հայագիտության զարգացման պատմության հետ:

Երբ ուզում ենք անրադառնալ վաստակաշատ լեզվաբանի կյանքի անցած ճանապարհին, մեր առաջ պատկերանում է իսկական ուսուցիչը՝ այդ բառի ամենաընդարձակ իմաստով, անբասիր մարդը, ներհուն ու սկզբունքային գիտնականը: Պրոֆ. Աշոտ Աբրահամյանի շուրջ չորս տասնամյակ տևած գիտական ու մանկավարժական գործունեությունը, նրա ողջ իմաստալից կյանքը եղավ համակ նվիրում հայագիտությանը, սերունդների կրթությանն ու դաստիարակությանը:

Չնայած որ նա երկար տարիներ (1950-1959) պաշտոնավարել է նաև ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում որպես ժամանակակից հայերենի բաժանմունքի վարիչ, բայց նրա գիտական ու մանկավարժական գործունեությունը հիմնականում կապված է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի հետ: Տարիներ շարունակ, սկսած 1944 թվականից, նա այստեղ ավանդել է հայագիտական մի շարք առարկաներ՝ հայոց լեզվի տեսություն, լեզվաբանության ներածություն, գրաբար, իսկ 1960 թվականից մինչև իր կյանքի վերջը ղեկավարում էր հայոց լեզվի ամբիոնը: Նրա ղեկավարության տարիներին ամբիոնը դարձել էր հանրապետության հայագիտական կենտրոններից մեկը:

Պրոֆ. Ա. Աբրահամյանի մեջ ներդաշնակորեն զուգակցվում էին գիտնականի ու հմուտ մանկավարժի լավագույն հատկությունները: Նա, իրոք, իր խոսքի նկատմամբ խոր հավատ ներշնչող դասախոս էր: Մեծ էր նրա որպես գիտնականի ու մանկավարժի, խոսքի համոզիչ ուժը, առիթնող հմայքը: Մանկավարժական բնատուր օժտվածությունը, ակնհայտ վարպետությունը, հաղորդվող նյութի համակողմանի ու խոր իմացությունը, մատուցման մատչելի եղանակները միշտ գրավում էին ուսանողներին, եւ լսարանը չթուլացող հետաքրքրությամբ էր հետետում սիրված դասախոսի յուրաքանչյուր խոսքին ու բառին:

Ոչ միայն իր դասախոսություններով, այլև իսկական մանկավարժի իր անբասիր վարքով, ուսանողների եւ գործընկերների նկատմամբ ունեցած ուշադիր ու զգայուն վերաբերմունքով նա իսկական ուսուցչի կերպար էր եւ այդպես էլ մնում է սերունդների հիշողության մեջ:

50-60-ական թվականներից սկսվում է Աբրահամյան հայագետի գիտական ու մանկավարժական գործունեության նոր, բեղմնավոր շրջանը: Նրա՝ որպես գիտնականի, խառնվածքի բնորոշ գծերը՝ լեզվական իրողությունների խոսքը քափանցելու, փաստերը համադրելու եւ ներքում վերլուծություններ կատարելու հատկությունները լավագույնս դրսևորվում են հենց այդ տարիներին:

1952 թվականին հրատարակվեց «Գրաբարի ձեռնարկը», որը՝ քերականական նյութի ամբողջական սագրքերից է՝ օգտակար ոչ միայն ուսանողությանը, այլև ընդհանրապես հայագիտությամբ զբաղվող մասնագետների համար: Մերումններ են սովորել այդ դասագրքով եւ շարունակում են սովորել: Պատահական չէ, որ հետագայում այն ունեցավ չորս հրատարակություն:

Պրոֆ. Ա. Աբրահամյանն անդադարձել է հայոց լեզվի տարբեր իրողությունների՝ պատմական հնչյունափոխության, բառագիտության, ժամանակակից քերականությանն ու տեսությանը վերաբերող բազմաթիվ հարաբերակցությունների հարցում: Այդ մասին են վկայում հանրապետական գիտական պարբերականներում հրատարակված բազմաթիվ հարաբերակցությունները («Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մասին», «Փաստեր հայերենի ժամանակի որոշման վերաբերյալ», «Բառաբանական դիտողություններ», «Վերլուծականությունը հայերենի տարբեր մակարդակներում», «Հայերենի քերականական համանունության շուրջը», «Բառաբանական դեմքի իմաստային ու կիրառական առանձնահատկությունները», «Վերլուծականության քերականական հարցի մասին», «Խոսքի մասերի եւ նախադասության անդամների փոխհարաբերության հարցի շուրջը» եւ մոտ այնպիսի խնդիրներ, որոնք կամ անտեսվել են ավանդական քերականության մեջ, կամ հատուկ լուծումներ չեն ստացել: Սակայն պրոֆ. Աբրահամյանի ուսումնասիրությունների մեջ հիմնական տեղ է գրավում բայը, որին նա նվիրել է մի շարք բարձրարժեք հետազոտություններ: Երկար տարիներ անվանի լեզվաբանն զբաղվել է հայկական իրողությունների մեկնաբանման մեջ, նորովի լուսաբանել բազմաթիվ երևույթներ, որոնք չեն արժանացել հայագետների ուշադրությանը:

1953 թվականին լույս տեսավ «Հայերենի դերբայները եւ նրանց ձեւաբանական նշանակությունը» գիրքը, որի մեջ փաստական հարուստ նյութի հիման վրա բազմակողմանիորեն ու գիտական խորությամբ բնութայն են ենթարկված հայերենի դերբայական ձեւերը մեր լեզվի զարգացման տարբեր շրջաններում (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար) ու բարբառներում, բացահայտված են նրանց ձեւաբանական արժեքն ու իմաստային առանձնահատկությունները հայերենի քերականական կառուցվածքի մեջ: Այս աշխատությունն իր պարունակած լեզվական հարուստ նյութով, հայերենի դերբայների հանգամանակից բնութայն էզակի երևույթ է հայ լեզվաբանական գրականության մեջ: Պատահական չէ, որ այն արժանացավ հայագետների ուշադրությանն ու բարձր գնահատականին:

Լեզվաբանը շարունակում էր խորանալ բայի ուսումնասիրության մեջ: Բային նվիրված նրա երկարամյա հետազոտությունների արդյունքներն ամփոփվեցին «Բայը ժամանակակից հայերենում» սովորածավալ (727 էջ) հատորում, որը հրատարակվեց 1962 թվականին:

Այս գրքում համադրված լեզվաբանական բնութայն են ենթարկվել ժամանակակից հայերենի բայական բառային կառուցվածքային ու իմաստային առանձնահատկությունները, նոր մեկնաբանություններ են տրված բայական մի շարք իրողությունների: Նոր մոտեցումներով են ներկայացված բայական սեռի, սեռադասերի, սեռային տեղաշարժերի երևույթները, ինչպես նաև կրկնաստությունը արդի հայերենի բայական համակարգում: Այս աշխատության մեջ լավագույնս դրսևորվել են հետազոտողի խորաքափանց միտքն ու լեզվական երևույթների վերլուծման հմտությունը:

Մեծ է պրոֆ. Աբրահամյանի դերը հայ լեզվաբանական գիտության զարգացման գործում: Հայերենի քերականության տարբեր հարցերին եւ առաջին հերթին բային նվիրված իր ուսումնասիրություններով լեզվաբանը կարևոր ներդրում ունի հայագիտության մեջ:

Պրոֆ. Ա. Աբրահամյանի գործունեությունը քերի կլիներ, եթե չնշեինք նրա քարգմանական գործունեությունը: Նա ոչ միայն մասնակցել է հայ մատենագիրների (Ազաթանգեղոս, Բուզանդ, Եղիշե, Խորենացի) երկերի խմբագրման ու հրատարակման, այլև քարգմանական աշխատանքներին:

1970 թվականին լույս տեսավ Եզնիկ Կողբացու իմաստասիրական երկը՝ «Եղծ աղանդոցը» պրոֆ. Աբրահամյանի քարգմանությամբ ու հարուստ ծանոթագրություններով: Նա անսահման գուրգուրանքով էր խոսում Մտեփանոս Օրբելյանի «Մյունիքի պատմությունը, երկի աշխարհաբար քարգմանության մասին, որի լույս տեսնելը, ցավոք, նա չտեսավ, որովհետեւ զիրքը լույս տեսավ 1986 թվականին, երբ նա այնու չկար:

Այո՛, զնացողի ամենամեծ հուշարձանը նրա գործն է: Պրոֆ. Ա. Աբրահամյանի վաստակը մեզ հիմք է տալիս ասելու, որ նրա անունն ու գործը միշտ կիիշվի հայագիտությանն ազնվորեն ծառայած երախտավորների մեջ: